Շմոլ գազ 4



6 Բոլոր դռները

Միկրոալիքային վառարան 7



7 Ծուղակ

ISSN 1829-149X
09004
9 771829 149003

ով իրազեկված է, նա զգաստացված է

արտակարգ թերթ

N 4 (277) 12.2.2009 - 18.2.2009 www.emergency.am

Նոր 28 հրշեջ ավտոմեքենա մայրաքաղաքի համար

Հայաստանի արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության եւ Ճապոնիայի կառավարության համագործակցությունը սկսվել է 2005 թվականից: Հաշվի առնելով հրշեջ հատուկ մեքենաների խիստ պահանջարկը՝ Հայաստանի փրկարար ծառայությունը կազմեց տեխնիկական աջակցության ցուցաբերման հստակ առաջարկ, որը ՀՀ կառավարությունը ներկայացրեց Ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալությանը: Ծրագիրը առարկայական դարձավ ու կյանքի կոչվեց այս տարվա փետրվարի 10-ին: Հայաստանի եւ Ճապոնիայի կառավարությունների միջեւ Երեւանի հրշեջ մասերին տեխնիկա տրամադրելու վերաբերյալ համաձայնագիր ստորագրվեց, որը վավերացրին Հայաստանի արտակարգ իրավիճակների նախարար Միեր Շահգելդյանը եւ ՀՀ-ում Ճապոնիայի դեսպանության հյուպատոս Յուն Նանազավան: Ըստ այդ համաձայնագրի՝ Երեւանի հրշեջ մասերը առաջիկայում կհամալրվեն 28 նոր հրշեջ մեքենաներով: Արտակարգ իրավիճակների նախարար Միեր Շահգելդյանը նշեց, որ ստորագրվող փաստաթուղթը մեծ կարեւորություն է ներկայացնում փրկարար ծառայության վերազինման առումով:

- Այս համագործակցությունը մեզ հնարավորություն կընձեռի արդիականացնել հրշեջ-փրկարարական տեխնիկան: Դրանից բացի կփոխանցվեն նաեւ հմտություններ եւ ունակություններ, ինչը եւս խիստ կարեւոր է, - նշեց նախարարը, հավելելով, - սա առավել լայն եւ կարեւոր ծրագրերից է, որը իրականացվում է ներկայումս, եւ այս տեսանկյունից այն լուրջ նշանակություն է ունենալու ոչ միայն Երեւանի, այլեւ մեր մարզերի հրշեջ փրկարարական տեխնիկայի արդիականացման հարցում:

Հույսով եւ վստահությամբ եմ նայում նաեւ հետագա այն ծրագրերին, որ մենք կկարողանանք իրականացնել Ճապոնացի մեր գործընկերների հետ: Եվս մեկ անգամ ցանկանում եմ մեր շնորհակալությունը հայտնել ցուցաբերված աջակցության համար:

>>> 5

Այս եւ մյուս շաբաթ օրերին, ժամը 15.30-ին, Հ2 հեռուստաընկերության եթերում «Արտակարգ ալիք» հաղորդաշարն է:

Փետրվարի 14-ին կարող եք դիտել.

- Ինչպես կահավորել տունը, հյուրասենյակի որ հատվածում տեղավորել բազկաթոռներն ու բազմոցը, ինչ անել, որ պատից կախված նկարը Ձեր գլխին չընկնի, պահարանները չլքեն իրենց տեղն ու եթե, Աստված մի արասցե, երկրաշարժ լինի, չփակեն Ձեր փրկության ճանապարհը...

- Վերազինվում են Երեւանի հրշեջ մասերը. 28 նոր հրշեջ ավտոմեքենա Երեւանին՝ Ճապոնիայի կառավարության կողմից...

- Ավարտվե՞ց ձմեռը, թե՞ ոչ: Ժամանա՞կն է պահել տաք վերարկուները, թե՞ դեռ սպասել է պետք, վերջապես՝ կարո՞ղ ենք արդեն սիրահարվել...

Այս եւ այլ թեմաների մասին՝ շաբաթ, 15.30-ին, Հ2-ի եթերում:

1-01՝ փրկարարները միշտ պատրաստ են

Հատուկ փրկարարական ջոկատում այս տարի 30 դիմում է ստացվել. հենց այդքան մարդ է փրկարար դառնալու ցանկություն հայտնել: Ջոկատում, սակայն, ոչ բոլորին են ընդառաջել: Առայժմ 16 դիմում են ընդունել, իսկ թե նրանցից քանիսը կանցնեն աշխատանքի, փրկարարի համազգեստ կհագնեն՝ ցույց կտա եռամսյա դասընթաց-փորձաշրջանը: Մարդ փրկելու ցանկությունից ու ձգտումից բացի համապատասխան գիտելիք, ֆիզիկական ու հոգեբանական պատրաստվածություն էլ է անհրաժեշտ: Հատուկ փրկարարական ջոկատում այս հարցերի հանդեպ առանձնահատուկ մոտեցում են ցուցաբերում:

- Քանի որ մեր ջոկատը տարբեր իրավիճակներում է հայտնվում, տարբեր դեպքերի է ականատես լինում, ապա փրկարարը նաեւ հոգեպես պետք է պատրաստ լինի, արագ կողմնորոշվի, ֆիզիկական գերազանց պատրաստվածություն ունենա, - նշում է ՀՓԶ հրամանատար Ավետիս Մանուկյանը եւ հավելում, - գիտելիքներն ու հմտությունները պետք են՝ մարդկանց անհրաժեշտ օգնություն ցուցաբերելու համար. այնպես չլինի, որ հոնքի տեղը՝ աչքը հանեն: Ամեն վայրկյանը թանկ է, հաճախ անհրաժեշտ է լինում առաջին բուժօգնություն ցույց տալ կամ վթարված մեքենայից անվնաս մարդ դուրս բերել եւ այլն:

>>> 4

«էլիտ գրուպն» առաջարկում է կյանքի նոր որակ

Սեյսմակայուն էլիտար շինարարության առաջատարը տարածաշրջանում

E-mail: info@elitegroup.am; URL: www.elitegroup.am

Դուք ցանկանում եք լավագույնը, շքեղն ու հարմարավետը, ապահովն ու անվտանգը, նախընտրում եք ճարտարապետական ինքնատիպ լուծումները, գերժամանակակից ինժեներատեխնիկական հագեցվածությունը, զարգացած ենթակառուցվածքը, բարձրակարգ սպասարկումը, ամենահարգին ու հեղինակավորը:

Այլեւս մի փնտրեք Ձեր ուզածն արտասահմաններում, այն, ինչ երազել եք, այսօր արդեն իրականություն է. «էլիտ Գրուպը» Երեւանի կենտրոնում կառուցում է Ձեր երազանքը: Միակ ընկերությունը Հայաստանում, որն արժանացել է որակի կառավարման ISO 9001-2000 միջազգային ստանդարտի վկայագրի՝ թոփ մենեջմենթի բնագավառում:

Ապահով, սեյսմակայուն եւ էլիտար շենքեր հատուկ Ձեզ համար:

Երեւան, Պուշկինի 21, ✆ 56-69-22, 56-69-33:

քրոնիկոն

Հայաստանի փրկարար ծառայություն զանգահարեք

1-01, 1-12

Հայտնաբերվել է դիակ

Փետրվարի 6-ին, ժամը 13.38-ին Երեւանի Կենտրոն համայնքի ոստիկանության բաժնից տեղեկություն է ստացվել, որ Հաղթանակի կամուրջի տակ՝ Հրազդան գետի ափամերձ տարածքում հայտնաբերվել է կնոջ դիակ:

Դեպքի վայր մեկնած փրկարարների օգնությամբ ժամը 14.30-ին Հրազդան գետի ափամերձ տարածքից դուրս է բերվել Լեոյի փողոցի 44 տան բնակիչ, 1951 թ. ծնված Սուսաննա Մելիք-Իսրայելյանի դին եւ հանձնվել ոստիկանության աշխատակիցներին:

Դռան հետեւում

Փետրվարի 7-ին, ժամը 11.45-ին տեղեկություն է ստացվել, որ Երեւանի Մոլդովական փողոցի 64 շենքի 20-րդ բնակարանի բնակիչը չի արձագանքում հեռախոսի եւ դռան զանգերին:

Դեպքի վայր մեկնած փրկարարները ոստիկանության աշխատակիցների ներկայությամբ բացել են բնակարանի դուռը, որտեղ հայտնաբերվել է անօգնական վիճակում հայտնված 1924 թ. ծնված Դարինկա Սիմոնյանը:

Դեպքի մասին տեղյակ է պահվել 1-03 ծառայությանը:

Վարորդի որոնումները դեռ շարունակվում են

Փետրվարի 7-ին, ժամը 14.16-ին Մասիսի ոստիկանության բաժնից տեղեկություն է ստացվել Արարատի մարզի Նորամարգ գյուղի կամրջի վրա կայանած, առանց վարորդի ավտոմեքենայի մասին: Ըստ նախնական ենթադրության՝ մեքենայի վարորդը ջրահեղձվել է:

«ՎԱԶ-2106» մակնիշի 66 ՍԼ 100 պետհամարանիշով ավտոմեքենայի վարորդ՝ Նորամարգ գյուղի բնակիչ, 1980 թ. ծնված Գաբրիել Առաքելյանին հայտնաբերելու նպատակով մարզային փրկարարական վարչության փրկարարական ջոկատը դեպքի վայրում իրականացրել է որոնողական աշխատանքներ: Նրանցից զատ որոնողական աշխատանքներին մասնակցել են նաեւ Սեւանի ջրափրկարարական խումբը եւ մարզի 24 հրշեջ-փրկարարներ:

Որոնումները դեռ շարունակվում են:

Դեպքով զբաղվում է Մասիս քաղաքի ոստիկանությունը:

Պայթել է գազի բալոնը

Փետրվարի 7-ին Վայոց ձորի մարզից տեղեկություն է ստացվել, որ ժամը 09.00-ի սահմաններում «ՎԱԶ-21101» մակնիշի 11 SS 518 պետհամարանիշով ավտոմեքենան Վայք քաղաքի «Ռուբեն ԵՀ» ՍՊԸ-ին պատկանող գազալցակայանում լիցքավորվելուց հետո կայանել է հարակից տարածքում գտնվող սրճարանի մոտ: Մոտ 10 րոպե անց, շարժիչի գործարկման ժամանակ պայթել է բեռնախցիկում տեղադրված գործարանային արտադրության, 1 խմ տարողությամբ գազի բալոնը, ինչի հետեւանքով վարորդ, 1977 թ. ծնված Հենրիկ Մալինցյանը եւ ուղեւորներ՝ 1953 թ. ծնված Գագիկ, 1979 թ. ծնված Գենադի Մալինցյանները եւ Կարինե Սահակյանը տարբեր աստիճանների մարմնական վնասվածքներով տեղափոխվել են Վայք քաղաքի հիվանդանոց:

Ըստ բժիշկների՝ տուժածների առողջական վիճակը միջին ծանրության է:

Դեղորայքային թունավորում

Փետրվարի 7-ին դեղորայքային թունավորումով Ստեփանավանի հիվանդանոց է տեղափոխվել Գերմանական Կարմիր Խաչի փողոցի 26 տան բնակիչ, 1987 թ. ծնված Հայարփի Ավագյանը:

Ըստ բժիշկների՝ տուժածի առողջական վիճակը միջին ծանրության է:

Հրդեհներ

Անցած շաբաթ հանրապետության տարածքում գրանցվել է տարբեր բնույթի հրդեհների բռնկման 26 դեպք:

Ավտոմեքենայում

Փետրվարի 6-ին՝ Երեւանի Դավիթ Անհաղթի 10 փողոցի 23/1 շենքի բակում կայանած «Ֆորդ» մակնիշի, 68 OS 593 պետհամարանիշով ավտոմեքենայում բռնկված հրդեհի հետեւանքով այրվել են ավտոմեքենայի շարժիչի էլեկտրական լարերը:

Խոտ, հետո խաղողի այգի

Տավուշի մարզից տեղեկություն է ստացվել, որ փետրվարի 7-ին հրդեհ է բռնկվել մարզի Սեւքար գյուղին հարակից դաշտում:

Այրվել է 3000 քմ մակերեսով խոտ: Սակայն հրշեջ փրկարարական ջոկատ վերադառնալու ճանապարհին՝ Ակնաղբյուր գյուղի տարածքում, հրշեջ-փրկարարները նկատել են այրվող խաղողի այգի: Իրականացվել է հրդեհաշիջում:

Այրվել է 1500 քմ մակերեսով խաղողի այգի:

Նույն օրը մարզի Թովուզ եւ Ներքին Կարմիրաղբյուր գյուղերի միջնամասում այրվել է 2 հա, իսկ Վազաշեն գյուղին հարակից դաշտում՝ 1000 քմ մակերեսով խոտ:

Պտղատու այգում

Փետրվարի 8-ին հրդեհ է բռնկվել Մեղրիի Մրգանուշի 4 հասցեում:

Ս. Զավարյանին պատկանող պտղատու այգում այրվել է 3000 քմ մակերեսով խոտածածկույթ, 20 ծառ եւ 6 քմ մակերեսով փայտյա շինություն:

Պահեստավորած խոտ

Փետրվարի 8-ին հրդեհ է բռնկվել Գեղարքունիքի մարզի Մաքենիս գյուղում:

Ս. Հովհաննիսյանի տան բակում այրվել է պահեստավորած 150 հակ խոտը:

Հրդեհ հողամասում

Փետրվարի 9-ին հրդեհ է բռնկվել Մեղրիի Զ. Անդրանիկի փողոցի վերջնամասում գտնվող հողամասում:

Այրվել են Գ. Հովհաննիսյանին պատկանող տնակն ու խոտը:

Հրդեհ եւ մահ

Փետրվարի 7-ին, ժամը 18.31-ին ահազանգ է ստացվել, որ հրդեհ է բռնկվել Երեւանի Արցախի փողոցի 18-րդ շենքի 68-րդ բնակարանում: Դեպքի վայր են մեկնել երկու մարտական հաշվարկ եւ ավտոսանդուղք:

Հրդեհը մարվել է ժամը 18.56-ին:

Այրվել են ընդհանուր՝ 20 քմ մակերես զբաղեցրած խոհանոցն ու միջանցքը:

Բնակարանում հայտնաբերվել է տանտիրոջ՝ 1937 թ. ծնված Խինեսա Զաքարի Խլղաթյանի այրված դին:

Տանիքն ու վագոն-տնակը

Փետրվարի 10-ին հրդեհ է բռնկվել Արտաշատի Ծովակալ Իսակովի փողոցի վերջնամասում գտնվող վագոն-տնակում:

Այրվել է Ա. Հարությունյանին պատկանող վագոն-տնակի տանիքը՝ 21 քմ մակերեսով:

***

Փետրվարի 10-ին Արմավիրի մարզի Ակնաշեն գյուղում բռնկված հրդեհի հետեւանքով ամբողջությամբ այրվել է Հ. Գեւորգյանին պատկանող վագոն-տնակը:

Կրպակ

Փետրվարի 10-ին՝ >>> 3

միջազգային լուրեր

Հյուրանոցը չհասցրին բացել

Փետրվարի 9-ի երեկոյան Պեկինում բռնկվել է նորակառույց, դեռեւս չբացված հյուրանոցը: 159 մետր բարձրություն ունեցող «Մանդարին Օրիենթալ Հոթելին» կից գտնվում է նորակառույց հեռուստաաշտարակը, եւ վտանգ կար, որ կրակը կարող է տարածվել նաեւ հեռուստակենտրոնի ուղղությամբ: Սակայն հրշեջներին հաջողվել է ժամանակին կասեցնել հրդեհի տարածումը:

Ըստ ոստիկանների՝ 44 հարկանի հյուրանոցի բացումը պետք է տեղի ունենար այս տարվա հոկտեմբերին, ուստի շենքում մարդիկ չկային: Մյուս կողմից՝ շենքը գրեթե ամբողջովին պատրաստ էր եւ նույնիսկ օգտագործվել էր ամառային օլիմպիական խաղերի ժամանակ: «Մանդարին Օրիենթալ Հոթելը» պետք է լրացներ Պեկինի բարձրակարգ հյուրանոցների շարքը: Ցավոք, շենքն արդեն ենթակա չէ վերականգնման:

Ականատեսների վկայությամբ՝ հրդեհի բռնկման պատճառն Ամանորի տոների ավարտի կապակցությամբ արձակված բազմաթիվ պայթուցիկներն են: Հրավառության կայծերը թափվել են հյուրանոցի տանիքի վրա, ինչից էլ բռնկվել է հրդեհը:

Վերջին տվյալներով՝ հսկայածավալ հրդեհից տուժել է յոթ հրշեջ, որոնցից մեկը ստացված ծանր այրվածքներից հիվանդանոցում մահացել է:

Մայրցամաքային աղետ

Ավստրալիայի Վիկտորիա եւ Նոր Հարավային Ուելս նահանգներում արդեն երկու շաբաթ է, ինչ լայնածավալ հրդեհներ են մոլեգնում: Հաստատված շոգ եղանակն ավելի է նպաստում հրդեհների տարածմանը եւ խոչընդոտում հրշեջների աշխատանքին:

Սթրաթեւեն փոքրիկ բնակավայրը հրշեջներն անվանել են «Մահվան հովիտ», որտեղ կործանիչ հրդեհը հողին է հավասարեցրել բոլոր շինությունները: Միայն շինությունների մխացող ավերակներն են վկայում, որ այստեղ մարդիկ են ապրել: Սթրաթեւենում մոտ 200 մարդ էր բնակ-

վում. տարերքը խլել է բնակիչներից 26-ի կյանքը: Տարօրինակն այն է, որ քաղաքում կանգուն է մնացել է միայն վերջերս բացված հրշեջ մասի շենքը:

Ընդհանուր առմամբ հրդեհները մոտ 200 մարդու կյանք են խլել, այրվել է 330 հազար հեկտար անտառածածկ տարածք, փլուզվել է ավելի քան 750 տուն: Տասնյակ մարդիկ համարվում են անհետ կորած, նրանց որոնումները շարունակվում են: Հարյուրավոր մարդիկ մնացել են անօթեւան, նրանց համար բացվել են վրանային ճամբարներ:

Առայժմ հրկիզումն է համարվում հրդեհների բռնկման ամենահավանական պատճառը: Հրկիզողները հայտարարվել են Ավստրալիայի թշնամի եւ ահաբեկիչ:

Հրդեհների դեմ պայքարին մասնակցում է ավելի քան չորս հազար հրշեջ՝ Ավստրալիայի տարբեր նահանգներից:

Վթար տիեզերքում

Փետրվարի 12-ին տիեզերքում իրար են բախվել ռուսական եւ ամերիկյան երկու արբանյակ: Ըստ ԱՄՆ-ի տիեզերքի ազգային գործակալության մասնագետների՝ սա պատմության մեջ առաջին դեպքն է, երբ տիեզերքում այս ձեւով խաչաձեւվել են մարդու ստեղծած երկու սարքի ուղիները:

Գործակալության տվյալներով՝ «վթարը» տեղի է ունեցել ավելի քան 800 կիլոմետր բարձրության վրա: Երկու արբանյակն էլ հեռահաղորդակցային էին: Ռուսական արբանյակի մասին հայտնի է, որ այն գործարկվել էր 1993 թվականին եւ արդեն սպառել էր իր ռեսուրսները: Իսկ ահա ամերիկյանն ամբողջ աշխարհին հայտնի «Իրիդիում» հեռահաղորդակցային խմբի շղթաներից մեկն էր: Այս արբանյակի հնարավորություններից օգտվում են ինչպես քաղաքացիական, այնպես էլ ռազմական գերատեսչությունները, այդ թվում՝ Պենտագոնը: Հաղորդվում է նաեւ, որ արբանյակների բախման հետեւանքով առաջացել է բեկորների երկու մեծ «ամպ»: Գործակալության հաշվարկներով՝ արբանյակները մասնատվել են 18 հազար բեկորի, որոնց ընդհանուր քաշը մոտ մեկուկես տոննա է:

Տոռնադոյի սարսափելի հետեւանքները

ԱՄՆ-ի Օկլահոմա նահանգի Լոուն Գրոուվ քաղաքի վրա հարձակված ուժգին տոռնադոյի հետեւանքով զոհվել է ութ մարդ, տասնյակ մարդիկ ստացել են տարբեր աստիճանի վնասվածքներ:

Ըստ ականատեսների՝ հանկարծակի հայտնված տոռնադոն հաշված րոպեներում հողին է հավասարեցրել փոքրիկ քաղաքը: Եվս երկու տոռնադո անցել է Օկլահոմա Սիթի քաղաքի տարածքով՝ ավելի քան մեկ օրով մարդկանց զրկելով էլեկտրաէներգիայից:

Իրականացվում են վերականգնողական աշխատանքներ:

Ֆաինա Թյունիբաբյան

արագ արձագանքման ծառայություններ

<<< 2 Իջեւանի Հանրապետության փողոցի 21 շենքի դիմաց գտնվող կրպակում հրդեհ է բռնկվել:

Չգործող կրպակն ամբողջությամբ այրվել է :

Հրդեհ «Ինտերնեյշնլ Մասիս Տոբակում»

Փետրվարի 11-ին, ժամը 11.15-ին հրդեհ է բռնկվել Մասիսում՝ «Ինտերնեյշնլ Մասիս Տոբակ» ՍՊԸ-ի տարածքում:

Դեպքի վայր է մեկնել երեք մարտական հաշվարկ եւ ՓՈՒՎ հրդեհաշիջման խումբը:

Հրդեհը մեկուսացվել է ժամը 12.40-ին, մարվել՝ ժամը 13.12-ին:

«Ստրիպս» արտադրամասում այրվել է 60 քմ մակերեսով ծխախոտի չորացման սարքավորումը:

ԼՂՀ ՓԾ Լրատվական կենտրոն

Հրդեհներ

Փետրվարի 6-ին հրդեհ է բռնկվել Մարտունու շրջանի Մսմնա գյուղի բնակիչ Ս. Սարգսյանի մարագում:

Այրվել են մարագը եւ 400 հակ խոտ:

Հրդեհի առաջացման պատճառն այրվող աղբն է, որը քամու միջոցով տարածվել է մինչեւ մարագ:

***

Փետրվարի 7-8-ին հրդեհ է բռնկվել Քաշաթաղի շրջանի Գետափ եւ Սարատակ գյուղերի խոտածածկ տարածքներում:

Այրվել են համապատասխանաբար՝ 3 եւ 1 հա չոր խոտ ու եղեգնուտ:

***

Փետրվարի 9-ին հրդեհ է բռնկվել Ստեփանակերտի Առաքելյան փողոցի տարածքում՝ քաղաքացիներից մեկին պատկանող հողամասում:

Այրվել են անվադողեր եւ աղբ:

Անհայտ կորել է

Փետրվարի 11-ին Մարտունու շրջանի Պառավաթումբ գյուղի բնակչուհի Շահում Ավետիսյանը ժամը 16.30-ին տնից դուրս է եկել եւ չի վերադարձել:

Ձեռնարկվել են որոնողական աշխատանքներ, որոնք առայժմ արդյունք չեն տվել:

Նաիրա Եղիազարյան

Մի քիչ եղանակի մասին

Հայպետհիդրոմետի տեղեկացմամբ՝ փետրվարի 5-ին հարավ-արեւմուտքից՝ հիմնականում Իրաքի, Սիրիայի տարածաշրջանից, հանրապետության տարածք են ներթափանցել արեւադարձային տաք օդային հոսանքներ, ինչով պայմանավորված էլ Հայաստանում ջերմաստիճանը բավական բարձրացել է: Ամենաբարձր ջերմաստիճանը դիտվել է Տավուշի եւ Սյունիքի հովիտներում՝ վերջին 5 օրերի ընթացքում տատանվելով 10-15 աստիճանի սահմաններում, Կապանում այն բարձրացել է մինչեւ 19 աստիճան տաքություն: Լեռնային շրջաններում նույնպես բարձր ջերմաստիճան է գրանցվում, ցերեկը այն նույնիսկ դրական է՝ 2-6 աստիճան, տեղ-տեղ՝ 8: Արարատյան դաշտում այս օրերին միջինը 13 աստիճան տաքություն է: Մայրաքաղաքում գիշերը լինում է 2-4, ցերեկը՝ 11-13 աստիճան տաքություն: Այս ցուցանիշները նորմայից բարձր են, Արարատյան դաշտում՝ 6-8 աստիճանով, Տավուշի հովիտներում՝ 7-9 աստիճանով:

- Սակայն ճիշտ չի լինի միանգամից ենթադրել, թե ձմեռն արդեն ավարտվել է, - ասում է օդերեւութաբանական կանխատեսումների բաժնի պետ Գագիկ Սուրենյանը, - որովհետեւ օդն ունի մթնոլորտային շրջանառություն, գոյություն ունի օդային զանգվածների հյուսիս-հարավ տեղաշարժ:

- Համենայն դեպս՝ առաջիկա 5 օրերին եղանակի ցրտեցում չի կանխատեսվում: Լինում են դեպքեր, երբ նման տաքացումներից հետո փետրվարի վերջին կամ մարտի սկզբին լինում է ցուրտ օդային զանգվածների ներխուժում, եւ ջերմաստիճանն ընկնում է մոտ 5-10 աստիճանով: Սակայն դրա մասին խոսելը դեռ վաղ է, քանի որ, եթե նայում ենք այս վերջին օրերի կտրվածքով, միայն տաք օդային զանգվածների ներխուժում ենք սպասում: Թե ի՞նչ կլինի հետո՝ չենք կարող ստույգ ասել, քանի որ Հայպետհիդրոմետում կանխատեսումներն արվում են 5 օրվա կտրվածքով, - պարզաբանում է Գագիկ Սուրենյանը:

Իսկ 5 օրվա կանխատեսումները հուշում են, որ փետրվարի 12-17-ը հանրապետությունում ջերմաստիճանը կբարձրանա 4-7 աստիճանով, կլինի առավելապես առանց տեղումների եղանակ:

Եթե նույնիսկ ցրտի, միեւնույն է խիստ սառնամանիք չի սպասվում, որովհետեւ հանրապետությունում ձյան ծածկը գրեթե բացակայում է: Այդ դեպքում ջերմաստիճանը կընկնի 5-10 աստիճանով, ինչը ոչ թե որպես ցրտեցում կդիտվի, այլ մոտ կլինի նորմային:

Տաք փետրվարը եւ մայրաքաղաքում 13 աստիճան տաքությունը բնավ աննախադեպ երեւույթ չեն: Նման եղանակ է դիտվել նաեւ 1981, 1986, 1987, 2001 թվականներին, իսկ 1979-ի փետրվար ամսին մայրաքաղաքում գրանցվել է 18, Սյունիքի հովիտներում՝ 25 աստիճան տաքություն:

սեյսմիկ պաշտպանություն

Փետրվարի 5-ից մինչեւ 11-ը ՍՊԱԾ-ի սեյսմիկ կայանները Հայաստանի տարածքում 3 բալ եւ ավելի ուժգնությամբ երկրաշարժ չեն գրանցել:

Տարածաշրջանում. 3 բալ եւ ավելի ուժգնությամբ չորս երկրաշարժ է գրանցվել: Փետրվարի 6-ին՝ Թուրքիայի Սարիղամիշ քաղաքից 36 կմ հյուսիս-արեւմուտք, տեղի է ունեցել 4-5 բալ ուժգնությամբ երկրաշարժ: Փետրվարի 9-ին՝ Թուրքիայում, Վան քաղաքից 10 կմ հյուսիս, գրանցվել է երկրաշարժ, որի ուժգնությունն էպիկենտրոնային գոտում կազմել է 3-4 բալ: Հաջորդ օրը Թուրքիա-Իրան սահմանային գոտում՝ թուրքական Դողուբայազետ քաղաքից 35 կմ հյուսիս-արեւելք, տեղի է ունեցել 4 բալ ուժգնությամբ երկրաշարժ, որին 2 ժամ անց հաջորդել է 3-4 բալ ուժգնությամբ հետցնցում:

Տարածաշրջանից դուրս. 6 եւ ավելի մագնիտուդով երկու ուժեղ երկրաշարժ է գրանցվել խաղաղօվկիանոսյան օղակաձեւ հրե գոտում: Փետրվարի 9-ին՝ Պերուի հյուսիսային ափամերձ հատվածում, Չիկլայո քաղաքից 150 կմ արեւմուտք, գրանցվել է 6,0 մագնիտուդով ուժեղ երկրաշարժ, որին 1 օր առաջ նախորդել է 5,1 մագնիտուդով նախացնցում: Զոհեր եւ ավերածություններ չկան: Փետրվարի 11-ին 7,2 մագնիտուդով ուժեղ երկրաշարժ է տեղի ունեցել Ինդոնեզիայի ափամերձ գոտում, Մանադո քաղաքից 315 կմ հյուսիս-արեւելք: Երկրաշարժից հետո Ինդոնեզիայում հայտարարվել է ցունամիի վտանգ, ինչը 1 ժամ անց հերքվել է: Երկրաշարժի հետեւանքով Սուլավեսի կղզու հյուսիսում առնվազն 17 մարդ վիրավորվել է, վնասվել է ավելի քան 30 շինություն: Երկրաշարժին հետեւել է 5,1-ից 5,7 մագնիտուդով 18 հետցնցում:

ՍՊԱԾ գործակալություն

շտապօգնություն 1-03 Երևան

Անցած շաբաթ շտապօգնության ծառայությունն արձագանքել է 3630 կանչի, հիվանդանոց է տեղափոխվել 369 մարդ: Եղել է մանկական 244 կանչ, հիվանդանոց է տեղափոխվել 38 երեխա:

Գրանցվել է 71 մահ եւ 19 դժբախտ պատահար:

Փետրվարի 5

Ավանի 12 հասցեում մոտոցիկլետի վթարի հետեւանքով մահացել է 22 տարեկան մի երիտասարդ:

Գյուլբենկյան 43 հասցեում բնակվող 50-ամյա Լ. Մանուկյանը թունավորվել է սննդից եւ առաջին բուժօգնություն ստանալով, հրաժարվել է հիվանդանոց տեղափոխվելուց:

Արցախի փողոցի 4 նրբանցքի 8 շենքի բնակիչ Անի Աբրահամյանը յոդից ստացել է աչքի լորձաթաղանթի այրվածք: Տուժածը հրաժարվել է հիվանդանոց տեղափոխվելուց:

Փետրվարի 6

Սննդային թունավորումով «Սբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոն են տեղափոխվել Նոր Նորքի 6-րդ զանգվածի բնակիչներ՝ Ն. Գեւորգյանը, Ռ Աբելյանը, Է. Աբելյանը եւ Ս. Գեւորգյանը:

Փետրվարի 8

Դեղորայքային թունավորումով Օգանովի 14 հասցեից «Արմենիա» բժշկական կենտրոն է տեղափոխվել 18-ամյա Հ. Խաչատրյանը:

Նոր Նորքի 3-րդ զանգվածում, տարբեր վայրերում տեղի ունեցած վթարների հետեւանքով տուժել են 50 տարեկան Սարգիսը եւ 12-ամյա Ս. Վարդանյանը, որոնք վնասվածքներով տեղափոխվել են «Սբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոն:

Շմոլ գազից թունավորումով վերոնշյալ բժշկական կենտրոն է տեղափոխվել նաեւ Թոթովենցի 13 հասցեում բնակվող 13-ամյա Թ. Ժամարյանը:

Փետրվարի 9

Դեղորայքային թունավորումով «Արմենիա» բժշկական կենտրոն է տեղափոխվել 16 թաղամասի 27 շենքի բնակիչ, 70-ամյա Ք. Հակոբյանը:

Խանջյան եւ Սայաթ-Նովա փողոցների խաչմերուկում տեղի ունեցած վթարի հետեւանքով բազմակի վնասվածքներով «Սբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոն է տեղափոխվել 48-ամյա Վ. Սարգսյանը: Իսկ Իսակովի պողոտայում վթարի ենթարկված 18-ամյա Ա. Մկրտչյանը եւ 18-ամյա Սուրենը վնասվածքներով տեղափոխվել են «Արմենիա» բժշկական կենտրոն:

Արշակունյաց պողոտայում վրաերթի հետեւանքով մահացել է անձը չպարզված մի քաղաքացի:

Շահումյանի գերեզմանատան մոտ դանակահարվել եւ ազդրի ծակած-կտրած վերքերով «Արմենիա» բժշկական կենտրոն են տեղափոխվել 40-ամյա Ա. Ամալյանը եւ 22-ամյա է. Ալաբյանը:

Փետրվարի 10

Շմոլ գազից թունավորումով թիվ 3 համալսարանական հիվանդանոց է տեղափոխվել Առինջ գյուղի բնակիչ՝ 3-ամյա Մ. Վարդանյանը, իսկ 33-ամյա Պ. Խաչատրյանը տեղափոխվել է «Սբ. Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոն:

Փետրվարի 11

Դավիթաշենի կամրջի վրա տեղի ունեցած վթարից տուժել եւ գանգուղեղի փակ վնասվածքով «Արմենիա» բժշկական կենտրոն է տեղափոխվել 22-ամյա է. Իսպանյանը:

եղանակի տեսություն

Փետրվարի 7-ին, 9-ին առանձին շրջաններում, 10-11-ը՝ շրջանների մեծ մասում դիտվել են տեղումներ՝ 1-10 մմ:

Ամենաբարձր ջերմաստիճանը դիտվել է. Սյունիքի հովիտներում եւ Արցախում՝ +14...+19, Տավուշում եւ Լոռիում՝ +11...+16, Արարատյան դաշտում եւ Սյունիքի նախալեռներում՝ +9...+14, լեռնային շրջաններում՝ +4...+9 ºC:

Ամենացածր ջերմաստիճանը գրանցվել է. լեռնային շրջաններում՝ -7...-12 (Մասրիկում՝ -16), Լոռիում՝ -2...-7, Տավուշում եւ Սյունիքի նախալեռներում՝ 0...-5, Արարատյան դաշտում, Սյունիքի հովիտներում եւ Արցախում՝ -4...+1 ºC:

Փետրվարի 13-16-ը սպասվում է առավելապես առանց տեղումների եղանակ,

17-ին սպասվում են տեղումներ: Քամին հարավ-արեւմտյան՝ 2-7 մ/վրկ, 16-17-ը՝ տեղ-տեղ ուժգնացում՝ 15-20 մ/վրկ: Օդի ջերմաստիճանը 13-16-ը կբարձրանա 3-5 աստիճանով, 17-ի ցերեկը կնվազի 2-4 աստիճանով:

1-01՝ փրկարարները միշտ պատրաստ են

<<< 1 Միշտ պատրաստ ու կիրթ լինելու համար Հատուկ փրկարարական ջոկատում ամենօրյա պարապմունքներ են անցկացվում: Տեսական դասընթացները զուգորդվում են գործնականով:

- Ամեն օր ժամը 10.30-ից մինչեւ 14.00-ը տեսական դասընթացի ժամն է: Դասացուցակը կա, թեման գիտեն. այսօր, օրինակ, ՀՀ Սահմանադրության մասին պարապմունքը ես եմ անցկացնելու, - ասում է ՀՓՁ հրամանատարը: - Ինչ վերաբերում է գործնական պարապմունքներին, ապա ամեն տարի թեմատիկ պլան է մշակվում, որտեղ ընդգրկվում են բոլոր դասընթացները: Գործնական տարբեր պարապմունքների համար տարբեր վայրեր ունենք: Փոքր մեխանիզացիայի հետ կապված պարապմունքները հիմնականում Հատուկ փրկարարական ջոկատի տարածքում ենք անցկացնում: Ամեն օր էլ կարող են եւ հիմնականում անցկացվում են գործնական պարապմունքներ: Օրինակ, կտրող գործիքներով աշխատում են հին մեքենայի վրա, կատարելագործում սարքերի հետ աշխատելու հմտությունները:

Տվյալ օրը գործնական դասը նվիրված էր նրան, թե հիդրավլիկ սարքի օգնությամբ ինչպես պետք է տուժածին դուրս բերել ճզմված մեքենայից: Գործիքը ջոկատը անցած տարեվերջին է ստացել, այն անփոխարինելի է հատկապես ավտովթարների ժամանակ: Սարքն ավելի հմտորեն կիրառելու համար փրկարարները պարբերաբար պարապմունքներ են անցկացնում:

- Դասընթացներն օգնում են, որ միշտ պատրաստ վիճակում լինենք, - պարզաբանում է ավագ հրահանգիչ Արմեն Գյուրջինյանը: - Մարդիկ սպասում են մեզ, հաճախ ակնկալելով ավելին, քան հնարավոր է անել: Իսկ ավելիին հասնելու համար պետք է անընդհատ կատարելագործվել:

Հատուկ փրկարարական ջոկատում պարապումունքները ամեն վայրկյան կարող են ընդհատվել: Դրանք տեւում են մինչեւ այն պահը, երբ հնչում է ահազանգը: Դեպքի վայր մեկնող փրկարարների խումբը սովորածն արդեն կիրառում է իրական արտակարգ իրավիճակում :

Նելլի Հարությունյան

Պաշտպանվել ականներից

ԼՂՀ կառավարությանն առընթեր փրկարար ծառայության տնօրեն Արսեն Սարգսյանը եւ ԼՂՀ տարածքում ականների հիմնահարցերով զբաղվող կառավարական հանձնաժողովի նախագահ Միքայել Գասպարյանը հանդիպել են «Հալո թրասթ» կազմակերպության ղեկավարության հետ, որը գլխավորում էր ծրագրի պատասխանատու Պատրիկ Թոմսոնը: Զրույցի ընթացքում քննարկվել են հետագա համագործակցությանն առնչվող մի շարք հարցեր: Նպատակ է դրվել՝ էապես բարձրացնել իրավասու կառույցների արագ արձագանքման աստիճանը բնակչության կողմից ականների հայտնաբերման եւ գտնված զինամթերքը վերադարձնելու հարցերում: Կարեւորվել են փորձի փոխանակման, տեղեկատվական ու տեխնիկական աջակցության եւ գործողությունների համակարգման խնդիրները:

Պայմանավորվածություն է ձեռք բերվել առաջիկայում կազմավորել համատեղ հանձնաժողով, որը կմշակի ԼՂՀ փրկարար ծառայության եւ «Հալո թրասթ» կազմակերպության միջեւ արդյունավետ համագործակցության մեխանիզմներ:

Ջեռուցման շրջանի հիմնախնդիրներ.

Շմոլ գազ

Թունավորումների մեջ մեծ տեղ են զբաղեցնում շնչառական թունավորումները, որոնք գերազանցապես շմոլ գազի հետեւանք են: Հատկապես ձմռան ամիսներին, երբ շատերը տները տաքացնում են տարբեր տիպի վառարաններով, շմոլ գազից թունավորումների հավանականությունը կտրուկ մեծանում է: Իհարկե, նման թունավորումներից խուսափելու լավագույն միջոցը անվտանգության կանոնների պահպանումն է, սակայն միշտ չէ, որ հնարավոր է լինում խուսափել թունավորումներից: Այս դեպքում արդեն հարկ է իմանալ՝ ինչպես վարվել նման թունավորումների ժամանակ:

Շնչառական թույներ

Տուժածի մաշկի գունատությունը կամ կապտավուն երանգը թթվածնի անբավարարության հետեւանք են, որոնք կարող են առաջանալ շմոլ գազի պատճառով: Տարիներ շարունակ շմոլ գազի թունավորման նշան է համարվել մաշկի եւ շրթունքների՝ բալի կամ կարմրականաչավուն երանգը: Սակայն բավարար չէ այս նշանների առկայությամբ ախտորոշել շմոլ գազով թունավորում: Կարմիր գույնն ի հայտ է գալիս շատ ուշ՝ մահից անմիջապես առաջ, ուստի թունավորման աստիճանը որոշելու համար պետք չէ առաջնորդվել միայն մաշկի գույնով:

Շնչառական բոլոր թունավորումների դեպքում տուժածներն անհապաղ թթվածնի կարիք են ունենում: Հնարավորինս շուտ հեռացրեք տուժածին շմոլ գազի աղբյուրից (առանց վտանգելու ձեր կյանքը):

Լինում են դեպքեր, երբ միայն թարմ օդի ապահովումն էլ կբավարարի տուժածին, եթե իհարկե, նրա գիտակցությունը տեղն է: Անգիտակից տուժածին դուրս բերեք մաքուր օդ, ստուգեք շնչուղիները: Եթե նա չի շնչում՝ կատարեք արհեստական շնչառություն: Մաքուր օդում արհեստական շնչառություն կատարելիս տուժածից թունավորվելու հավանականությունը զրո է:

Թունավորման նշանները

Շատ կարեւոր է ժամանակին ախտորոշել թունավորումները: Տուժածի վիճակի ուշադիր զննումը եւ պատահարի վերաբերյալ վկաների տված տեղեկությունները կօգնեն ճիշտ ախտորոշել թունավորումները: Թունավորման նվազագույն կասկածի դեպքում անմիջապես դիմեք բժշկի:

Ուշադիր զննեք շրջապատը: Տարօրինակ հոտերը, վառվող կրակը եւ այլ նշաններ կարող են շատ բան հուշել: Կատարեք տուժածի նախնական զննում եւ, եթե համոզվեք, որ տուժածի կյանքին անմիջական սպառնացող վտանգ չկա, կատարեք երկրորդային զննում:

Թունավորման նշաններն են.

- տուժածի հիվանդագին տեսքը,
- սրտխառնոցը,
- փսխումը,
- լուծը,
- որովայնի եւ կրծքավանդակի ցավերը,
- սառը քրտինքը,
- շնչառության դժվարացումը,
- գիտակցության կորուստը,
- ցնցումները:

Թունավորումների նշան կարող են լինել շրթունքների շրջանում եւ բերանի խոռոչում այրված վերքերը:

Եթե եզրահանգում եք, որ տուժածը թունավորված է, փորձեք գտնել հետեւյալ հարցերի պատասխանները.

- ի՞նչ թույն է առկա,
- ի՞նչ քանակությամբ,
- ե՞րբ է տեղի ունեցել թունավորումը:

Այս հարցերի պատասխանները կօգնեն ճիշտ կողմնորոշվել եւ տուժածին առաջին օգնություն ցույց տալ:

Թունավորումների դեպքում ցույց տրվող առաջին օգնությունը

Թունավորման բարդությունը կախված է ընդունած թույնի տեսակից ու քանակից, մարմնի մեջ ներթափանցելու ուղուց, թունավորման պահից անցած ժամանակից, ինչպես նաեւ տուժածի տարիքից, մարմնի չափերից ու զանգվածից: Թունավորման դեպքում պետք է հետեւել առաջին օգնություն ցույց տալու հետեւյալ հիմնական փուլերին.

- զննեք շրջապատը եւ համոզվեք, որ ապահով է տուժածին մոտենալը, աշխատեք հասկանալ, թե ինչ է պատահել,
- անհրաժեշտության դեպքում տուժածին հեռացրեք թունավոր միջավայրից,
- կատարեք տուժածի նախնական զննում՝ ստուգելով նրա շնչուղիների անցանելիությունը, շնչառությունը եւ արյան շրջանառությունը:



Տուժածի կյանքին սպառնացող իրավիճակներում ցույց տվեք առաջին օգնություն:

Տուժածի գիտակցության առկայության դեպքում կատարեք երկրորդային զննում:

Ահազանգեք շտապ օգնություն:

Մինչեւ շտապ օգնության ժամանումը սպասեք դեպքի վայրում, տուժածի կողքին, եւ կատարեք շտապ օգնության հերթապահի ցուցումները:

Թույլ մի՛ տվեք տուժածին առանց բժշկի թույլտվության ուտել կամ խմել:

Շատ կարեւոր են թունավորումների ժամանակ առաջին օգնություն ցույց տալու հիմնական փուլերի յուրացումը եւ կիրառումը:

Նոր 28 հրշեջ ավտոմեքենա մայրաքաղաքի համար

<<< 1 ՀՀ-ում Ճապոնիայի դեսպանության հյուպատոս Յուն Նանազավան հույս հայտնեց, որ այս նախագծի շնորհիվ Երեւանում, որտեղ կենտրոնացված է Հայաստանի ամբողջ բնակչության մեկ երրորդը, եւ որտեղ տեղի են ունենում հանրապետությունում գրանցվող հրդեհների կեսից ավելին, հնարավոր կլինի արդյունավետ հակահրդեհային գործունեություն ծավալել, որի միջոցով կպահպանվի բնակչության կյանքն ու ունեցվածքը:

- Ճապոնիայում ձեւավորված համոզում կա, որ ամենասարսափելի բաներն աշխարհում՝ երկրաշարժը, հրդեհը, ամպրոպն ու կարկուտն են: Սա հավելյալ վկայությունն է այն բանի, թե որքան մեծ է Ճապոնացիների՝ հրդեհներից եւ այլ աղետներից ունեցած վախը: Ճապոնիայի բնակչությունը աղետների դեմ պայքարի հարուստ կենսափորձ ունի: Հուսով ենք, որ այս նախաձեռնությամբ հնարավոր կլինի Հայաստանին փոխանցել աղետների դեմ պայքարում դարերի ընթացքում ճապոնացիների ամբարած փորձը: Մենք շատ երջանիկ կլինենք, եթե հակահրդեհային այս նոր սարքավորումների միջոցով հայ մասնագետներին հաջողվի կանչից մինչեւ դեպքի վայր արագ փրկարարական ծառայություն մատուցել եւ բարձրացնել բնակչության անվտանգության մակարդակը, - իր ելույթում նշեց Նանազավան:

Հայաստանի փրկարար ծառայության տնօրեն, փ/ծ գեներալ-լեյտենանտ Էդիկ Բարսեղյանը եւ Ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալության (JICA) գրասենյակի գլխավոր ներկայացուցիչ պարոն Յուկիհիկո Էջիրին էլ ստորագրեցին համաձայնագիր՝ նշված տեխնիկական աջակցության ցուցաբերման հարցերով մրցույթի կազմակերպման վերաբերյալ:

- Խորհրդանշական է, որ փաստաթուղթը ստորագրվում է հենց փետրվարի 10-ին, Ճապոնացիների համար շատ կարեւոր մի օր, երբ Ճապոնիայում նշվում է պետության հիմնադրման օրը, - նկատեց Էդիկ Բարսեղյանը:

- Պետք է նշեմ, որ այս ամենին միանգամից չենք հասել: Սա Ճապոնացի մեր գործընկերների հետ համատեղ, երկարաժամկետ, տքնաջան աշխատանքի արդյունք է: Կցանկանայի վստահեցնել բոլորիդ ու մեր գործընկերներին, որ Ճապոնիայի կառավարության կողմից տրամադրվող սարքավորումներն ու հրշեջ մեքենաները կպահպանենք աչքի լույսի պես եւ կապահովենք դրանց նպատակային օգտագործումը, - խոստացավ փրկարար ծառայության տնօրենը:

Հարկ է նշել, որ անկախացումից հետո նոր հրշեջ ավտոմեքենա ձեռք է բերվել միայն անցած տարի. պետբյուջեից հատկացված միջոցներով գնվել է 8 տոննանոց 9 «ԿամԱԶ» ավտոմեքենա: 2004 թվականին Ֆրանսիայից օգնություն է ստացվել օգտագործած 9 ավտոմեքենա, որոնցից 5-ը՝ հրշեջ: Ծրագրի շրջանակներում՝ անցած տարի Շվեդիայից ձեռք է բերվել ուսումնական «Վոլվո» մակնիշի ավտոմեքենա, սանդուղքով ու նոր գույքով, այդ թվում՝



փրկարարական:

Կառավարության միջնաժամկետ ծրագրով այսուհետ յուրաքանչյուր տարի պետք է ձեռք բերվեն ոչ միայն հրշեջ մեքենաներ, այլեւ փրկարարական սարքավորումներ ու գործիքներ:

Ճապոնացիների հետ ստորագրած համաձայնագրով միանգամայն նոր ձեռք բերված 28 հրշեջ ավտոմեքենաները Հայաստանում կլինեն արդեն գարնանը, որոնք կապահովեն բոլոր հրշեջ ջոկատների մարտունակությունը:

Մանե Գրիգորյան

Հայտարարություն

Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության Հայաստանի փրկարար ծառայությունը հայտարարում է մրցույթ՝ Հայաստանի փրկարար ծառայության աշխատակազմում (այսուհետ՝ Աշխատակազմ) քաղաքացիական ծառայության հետեւյալ թափուր պաշտոններն զբաղեցնելու համար

Պետական հրդեհային տեսչության (այսուհետ՝ Տեսչություն) Արագածոտնի մարզային հրդեհային տեսչության (այսուհետ՝ Արագածոտնի տեսչություն) տեսչական բաժնի (այսուհետ՝ Բաժին) առաջատար մասնագետ-տեսուչ (ծածկագիր՝ 34/1-3.3-7)

Պետական հրդեհային տեսչության (այսուհետ՝ Տեսչություն) Շիրակի մարզային հրդեհային տեսչության (այսուհետ՝ Շիրակի տեսչություն) տեսչական բաժնի (այսուհետ՝ Բաժին) առաջատար մասնագետ-տեսուչ (ծածկագիր՝ 34/1-3.3-28)

Վերահսկողություն է իրականացնում հրդեհների հետաքննության եւ վարչա-իրավական գործունեության գործառույթների օրինականության պահպանման վրա, իրականացնում է հրդեհա-տեխնիկական հետազոտությունները, արդյունքները ընդհանրացնում է եւ այն ներկայացնում է Բաժնի պետ-ավագ տեսուչին, իր լիազորությունների շրջանակներում, ինչպես նաեւ Բաժնի պետ-ավագ տեսուչի հանձնարարությամբ, նախապատրաստում է առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, զեկուցագրեր եւ այլ գրություններ. Բաժնի պետ-ավագ տեսուչին, ըստ անհրաժեշտության, ներկայացնում է առաջարկություններ,

1-2 կետերում նշված թափուր պաշտոններն զբաղեցնելու համար հայտարարված մրցույթը կկայանա 25.03.2009 թ.՝ ժամը 14:15-ին, Հայաստանի փրկարար ծառայության շենքում (ք.Երեւան Պուշկինի 25):

Նշված թափուր պաշտոնն զբաղեցնելու համար պահանջվում է՝

- բարձրագույն կրթություն
- քաղաքացիական ծառայության պաշտոններում կամ համայնքային ծառայության պաշտոններում առնվազն երկու տարվա ստաժ, կամ վերջին երեք տարվա ընթացքում քաղաքական, կամ հայեցողական, բացառությամբ Հայաստանի Հանրապետության համայնքների ղեկավարների տեղակալների, խորհրդականների, մամուլի քարտուղարների, օգնականների եւ ռեֆերենտների պաշտոնների, կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ, կամ առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, կամ պետական կառավարման ոլորտի առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ.
- տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն,
- անհրաժեշտ տեղեկատվության տիրապետում,
- այս կետում նշված պաշտոնի անձնագրերի 10-րդ կետի «բ» ենթակետում նշված իրենց լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն,
- համակարգչի եւ ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն, ինչպես նաեւ այլ անհրաժեշտ ծրագրային միջոցների տիրապետում,
- անհրաժեշտ (պարտադիր) կառավարչական հմտությունների եւ ունակությունների, ինչպես նաեւ նշված պաշտոնների անձնագրերով նախատեսված գործառույթներից բխող կառավարչական հմտությունների եւ ունակությունների տիրապետում (Ցանկեր N 1, 2):

Պետական հրդեհային տեսչության (այսուհետ՝ Տեսչություն) Արագածոտնի մարզային հրդեհային տեսչության (այսուհետ՝ Արագածոտնի տեսչություն) հրդեհների հաշվառման, վերլուծության եւ հակահրդեհային քարոզչության բաժնի (այսուհետ՝ Բաժին) առաջատար մասնագետ-տեսուչի (ծածկագիր՝ 34/1-3.3-9)

4. Պետական հրդեհային տեսչության (այսուհետ՝ Տեսչություն) Արմավիրի մարզային հրդեհային տեսչության (այսուհետ՝ Արմավիրի տեսչության) հրդեհների հաշվառման, վերլուծության եւ հակահրդեհային քարոզչության բաժնի (այսուհետ՝ Բաժին) առաջատար մասնագետ-տեսուչի (ծածկագիր՝ 34/1-3.3-15)

Իրականացնում է հրդեհների հաշվառման, վերլուծության աշխատանքներ եւ հակահրդեհային քարոզչություն: Կատարում է ներկայացվող հաշվետվությունների վերլուծություն: Զբաղվում է հրդեհների հաշվառման, վերլուծության աշխատանքներ եւ հակահրդեհային քարոզչության ոլորտներին վերաբերող իրավական ակտերի մշակմամբ եւ լրամշակմամբ: Մասնակցում է սեմինարներին եւ հանդես է գալիս զեկուցումներով:

3-4 կետերում նշված մրցույթները կկայանան 26.03.2009 թ.՝ ժամը 10:00-ին, Հայաստանի փրկարար ծառայության շենքում (ք. Երեւան Պուշկինի 25):

Նշված թափուր պաշտոններն զբաղեցնելու համար պահանջվում է՝

- բարձրագույն կրթություն
- քաղաքացիական ծառայության պաշտոններում կամ համայնքային ծառայության պաշտոններում առնվազն երկու տարվա ստաժ, կամ վերջին երեք տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական, բացառությամբ Հայաստանի Հանրապետության համայնքների ղեկավարների տեղակալների, խորհրդականների, մամուլի քարտուղարների, օգնականների եւ ռեֆերենտների պաշտոնների, կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ, կամ առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, կամ պետական կառավարման ոլորտի առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ.
- տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն,
- անհրաժեշտ տեղեկատվության տիրապետում,
- համակարգչով եւ ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:
- Այս կետում նշված պաշտոնի անձնագրի 10-րդ կետի «բ» ենթակետում նշված իրենց լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն,
- անհրաժեշտ (պարտադիր) կառավարչական հմտությունների եւ ունակությունների, ինչպես նաեւ նշված պաշտոնների անձնագրերով նախատեսված գործառույթներից բխող կառավարչական հմտությունների եւ ունակությունների տիրապետում (Ցանկեր N 1, 2):

* * *

Դիմող ՀՀ քաղաքացիները Աշխատակազմ (ք. Երեւան, Պուշկինի 25) պետք է ներկայացնեն հետեւյալ փաստաթղթերը՝

- դիմում՝ մրցութային հանձնաժողովի անունով (ձեւը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս),
- տվյալ պաշտոնն զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների եւ աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի՝ դիպլոմի(ների), վկայական(ների), աշխատանքային գրքույկի (վերջինիս բացակայության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել տեղեկանք համապատասխան մարմնից) պատճենները՝ բնօրինակների հետ միասին,
- արական սեռի անձինք՝ նաեւ զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենը՝ բնօրինակի հետ միասին, կամ համապատասխան տեղեկանք,
- մեկ լուսանկար՝ 3X4 սմ չափսի,
- անձնագրի պատճենը:

ՀՀ քաղաքացին մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը հանձնում է անձամբ՝ ներկայացնելով անձնագիր:

ՀՀ քաղաքացիները մրցույթին ներկայանում են անձնագրի, դիպլոմի, աշխատանքային գրքույկի, իսկ արական սեռի անձինք՝ նաեւ զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի բնօրինակներով:

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր՝ ժամը 9:30-ից մինչեւ 12:30-ը, բացի շաբաթ եւ կիրակի օրերից:

Դիմումների ընդունման վերջին ժամկետն է՝ 27.02.2009 թ.:

Մրցույթներին մասնակցել ցանկացող ՀՀ քաղաքացիները լրացուցիչ տեղեկություններ ստանալու, ինչպես նաեւ պաշտոնի անձնագրին եւ հարցաշարերին ծանոթանալու համար կարող են դիմել Աշխատակազմի անձնակազմի կառավարման վարչություն (ք. Երեւան, Պուշկինի 25, հեռ. 53 -07 - 87):

Միաժամանակ տեղեկացվում է, որ մրցույթներին մասնակցելու համար ՀՀ քաղաքացիների ներկայացրած փաստաթղթերի պատճենները հետ չեն վերադարձվում:

Ավագ Եփրեմյան

Բոլոր դռները

Երկրորդ մաս

Սյորենի «տիեզերական» երազը, որն ուղեկցվում էր անհայտ հեղինակի ձայնով, ընդհատվում է...

Սառայի հետ զրուցելիս Սյորենը հայտնում է իր որոշման մասին. նա վստահ է, որ Անանդին առեւանգող եկվորներն իրեն էլ են «երեւալու», եւ պատրաստ է հանդիպել նրանց: Փորձագետների կենտրոնից ստացված հաղորդագրությունը տեղեկացնում է, որ առաջիկա նիստը կայանալու է վաղը: Առանց մղձավանջների գիշերվան հաջորդում է առավոտվա տարօրինակ անորոշությունը, որն, անշուշտ, կապված է Փորձագետների հավաքի, այնտեղ կայանալիք քննարկումների ու դրանց հանդեպ Սյորենի ունեցած վերաբերմունքի հետ:

Սկիզբը՝ 263-276 համարներում

4.

Սյորենը լուսաբացին զգաց, որ գիշերը խաղաղ է եղել: Երազի նշույլ անգամ չէր մտաբերում: Մղձավանջի՝ առավել եւս: Գոհության տարօրինակ, գրեթե անհիմն մի զգացողություն ուներ եւ, միաժամանակ, քիչ ավելի խորքում, չէր կարողանում հաշտվել իր այդ զգացողության հետ: Որովհետեւ հենց անհիմն էր, երեւի, գոհությունը: Երկուսը միասին էլ անորոշություն էին ծնում: Իսկ հոգու ամենախոր խորշում արդեն՝ անանունություն...

Փորձագետները ծանրումեծ հավաքվում էին: Նրանք էլ էին անանուն թվում Սյորենին, չնայած իրենց հնչեղ անուններին. նրանք՝ իրենց այս կլոր սրահում աշխարհի ճակատագիրը որոշողները...

Յուրատեսակ սրահ էր, համարյա մի դահլիճ: Մեջտեղում, հատակից մոտ երկու մետր բարձր, անսովոր մի գահ՝ նախատեսված, ասես, թագավորների խմբի համար, դրված էր հսկա ու կլոր, ճեփ-ճերմակ սեղանը, որի շուրջն՝ իրարից բավական հեռու շարված սպիտակ աթոռներին նստած էին ինը հոգի՝ ճերմակ հագուստներով. ոչ այն է՝ կոստյում, ոչ այն է ֆրակ: Նրանցից յուրաքանչյուրի թիկունքին մեծոի մի պատուհան էր, ավելի ստույգ՝ պատուհան հիշեցնող պատկեր: Գուցե հենց պատկեր, որովհետեւ վարագույրներ չկային, լույս էլ չէր թափանցում, թատերական ձեւավորում էր, կարծես թե: Բաց գույնի ու մաքուր պաստառներ էին, ուրեմն, շրջանակված, ինչպես պատուհանը. տպավորիչ էր հենց իբրեւ ձեւավորում, թեպետ տպավորում էր ավելի շատ իր տարօրինակությամբ. իսկը ժամանակին տարածված մոդեռն ներկայացումներից մեկի բեմը, սակայն առանց հանդիսատեսի. գործող անձինք ու հանդիսականներն իրենք էին: Իննից ամեն մեկը մյուսներին տեսնում էր այդ պատուհան հիշեցնող շրջանակների խորապատկերին՝ սպիտակ հագած ինը Փորձագետ՝ սպիտակի վրա. կարող էին նաեւ բոլորովին չերեւալ, եթե դեմքեր, ընդ որում՝ տարբեր դեմքեր, չունենային: Խորհրդավոր տեսարան էր. խոսողը դեմք էր միայն ու մի զույգ ձեռք... Վառ լուսավորված էր ամեն մի անկյունը, այնպես, որ ոչ մի առարկայի ստվերը տեսանելի չէր: Այդպես եւ՝ նրանք՝ սպիտակ Փորձագետները. նրանց դեմքերին ընկած լույսերը, ամեն մեկին՝ իրենը, թիկունքում ստվերներ չէին թողնում: Մաքուր պատկերներ էին: Լուրջ էին: Բոլորը: Բայց ոչ մռայլ: Քննարկվելիք հարցերին արժանի լրջություն էր դա: Երկու հարց, որոնցից առաջինը վերաբերում էր բժշկագիտության բնագավառին, իսկ երկրորդը գլխավորն էր, որն, ըստ



պաշտոնական ձեւակերպման, հնչում էր այսպես. «Լրացուցիչ կենսական տարածքների նվաճում»: Բավական չեզոք մի անվանում, եթե նկատի ունենանք, որ խոսքն, այնուամենայնիվ, քառաչափ ու հնգաչափ տարածության մասին էր լինելու: Քիչ է ասել՝ մասին, վերջնական նպատակը հստակ որոշում կայացնելն էր: Քննարկումները վարելու էր Ալեքսանդրը: Վարողի ով լինելն այստեղ, այդպես էր թվում, էական նշանակություն չուներ, ուստի եւ, գրեթե միշտ, այդ պարտականությունը, ներքին մի համաձայնությամբ, լռելյայն թողնվում էր Ալեքսանդրին՝ իբրեւ ամենաավագի:

Ի դեպ, սեղանն, այո, կլոր էր, կլոր սեղանի գաղափարը՝ հիմքում դրված հավասարության շեշտադրմամբ, անհիշելի ժամանակներից ի վեր նույն նշանակությունն էր ընդգծում: Բայց նշանակությունն ընդգծելը մի բան է, այդ նշանակությունը մարմնավորելն ու ապրելը՝ բոլորովին այլ, գուցե եւ՝ անհնար բան: Բնության մեջ հավասարություն, ամենայն հավանականությամբ, գոյություն չունի: Տեսականորեն դա, երեւի թե, պիտի տեղի ունենար, որքան էլ անհավատալի թվա, հանրությունների մեջ, գուցե հենց դա էլ Նախանշված է եղել՝ իբրեւ հանրությունների, այսինքն՝ մարդու, գերնպատակ: Միաժամանակ՝ իբրեւ փորձաքար: Բարդ հաշվարկ է. բնության մեջ չկա, եւ ամենաանհավասարասեր էակն էլ մարդն է, որին, սակայն, բանականություն է տրված... Ուրեմն՝ հավասարությունը պիտի կայանար բացառապես իբրեւ բանականության պտուղ: Չկայացավ... Այնպես որ, դառնալով կլոր սեղանին՝ ինչ-որ կարգ, Փորձագետների հարաբերություններում, այնուամենայնիվ, կար, ինչպես եւ ամենուր, մարդկանց բոլոր տեսակի խմբերում, ամեն առանձին դեպքում՝ իր որոշակի երանգավորումով: Դա մասնավորապես երեւում էր նաեւ սեղանի շուրջը նստելու հերթականությունից. Սյորենը հաջորդն էր Ալեքսանդրից հետո՝ նրա ձախ կողմում: Պտտվելով ժամացույցի սլաքին հակառակ ուղղությամբ՝ դա վերջին աթոռն էր: Հենց այդ ուղղությամբ էլ «պտտվել» էին: Դա էր Սյորենի տեղը, որովհետեւ, ինչպես ասվել է, Փորձագետների կազմում նրա դերը հակակշռելն էր: Նա հակակշիռ էր: Մյուս 8 հոգին, կյանքի փորձով ու հիմնավոր գիտելիքների պաշարով զինված, իրենք իրենց բոլոր հարցերը հարցրած ու բոլոր պատասխանները պատասխանած պատկառազդու այրեր, ոչ թե Սյորենի նմանի կարիքն զգում էին, այլ պարզապես դա եւս մի հաշվարկի արդյունք էր. նրանք գիտեին, որ առանց նման մեկի ոչ մի կենտրոն, հանձնաժողով, անգամ ակումբ գոյության իրավունք չունի եւ վերջ: Վերադառնանք ժամացույցի սլաքին. Ալեքսանդրի աջում առաջինը հենց Իսակն էր, բնագետը, ժամանակի ու տարածության պատասխանատուն: Նա այսօր խոսք ուներ ասելու:

Ապա մյուսներն էին՝ բոլորը. Հարոնը, Ռամազդը, Կրատը, Զեսը, Հայավաթը եւ Մարկոսը: 9 հոգի... Պատկերով ու նմանությամբ մուսաների, որոնք «հովանավորում»-ղեկավարում են կյանքի «ծյուղերը», ուղղություն տալիս նրա ընթացքին...

Ալեքսանդրն արագ-արագ արտասանեց կարճառոտ, սովորական առաջաբանի բառերն ու խրոխտ հնչեցնելով Փորձագետ-բժշկապետի անունը՝ «Կրա́տ»՝ ձեռքի շարժումով հրավիրեց նրան սկսել:

Կրատը, կարծես հենց այդ հրահանգին էր սպասում, անմիջապես գործի անցավ: Նրա ձայնը տարածվեց սրահով մեկ...

Սյորենը տեղյակ էր խնդրին: Մարդիկ «մարդ ստանալու» փորձերն էին շարունակում: Նոր բան չէր: Երկու-երեք դարի փորձառություն ուներ այդ աշխատանքը: Ժամանակակից գիտական միտքը թույլ էր տալիս առավելագույն ճշգրտությամբ ընտրել անհրաժեշտ քայլերը, դրանց հերթականությունը, ժամանակ առ ժամանակ նույնիսկ թվում էր, թե մոտ է հաջողությունը, բայց միշտ, վերջին պահին կամ, երբեմն էլ, խիստ որոշակի արդյունք ստանալուց հետո հանկարծ պարզվում էր, որ սխալ է կատարվել, որ ինչ-որ բան դարձյալ խանգարել է լիակատար հաջողությանը: «Լիակատար հաջողություն» այս դեպքում նշանակում էր մարդուց ոչնչով չտարբերվող արարածների «ստացումն» արհեստական ճանապարհով: Ո՞րն էր իմաստը: Ըստ տարածված կարծիքի՝ աշխատանքը զուտ առողջապահական նպատակներ էր հետապնդում: Դա էր գլխավոր պատճառը, որ այդ խնդիրը մշտապես գտնվում էր բժշկագիտության սեւեռուն ուշադրության կենտրոնում, ստույգ՝ Փորձագետների, մասնավորաբար՝ Կրատի «հովանու ներքո»: Գլխավոր պատճառը... իսկ երկրորդականները, որոնք գուցեեւ հենց հիմնականներն են, ինչպես միշտ, հրապարակման ենթակա չեն: Ահա հիմա էլ Կրատը «համոզում» է, որ գիտափորձերը շարունակելու պահանջը դժվար է գերագնահատել, որ ձախողումից խոսելն առհասարակ անհեթեթություն է, որ այդ աշխատանքի բերած «շոշափելի օգուտներն» ակնհայտ են արդեն եւ նման բաներ... նաեւ՝ ամենակարեւորը. գործի շահերից ելնելով ու գործի իսկ բնույթը նկատի ունենալով՝ գաղտնիությունը պիտի պահպանվի:

«Հազարամյակներ ի վեր հնչող բառեր, որոնց իմաստները... ստույգ՝ որոնք կորցրել են իրենց իմաստները, բայց այդ հանգամանքին ոչ մի նշանակություն չեն տալիս ու նույն անվրդովությամբ շարունակում են հնչել՝ վրդովելով լսողներին: Ինչի՞ համար են գաղտնիքները, ո՞վ է ումից վախենում, ո՞վ պիտի խանգարի եւ ինչո՞ւ...». Սյորենի մտքում հերթով ծագող այս հարցերը պատասխաններ չունեին: Իբրեւ հարց գոյություն ունենալն էր դրանց ճակատագիրը...

Տվյալ դեպքում, «բժշկական» անվանված այդ գիտափորձերն այդքան էլ «խուլ» գաղտնիքներ չէին: Ամենաէականը գոնե այս կամ այն կերպ հայտնի էր շատերին. ամեն հերթական փուլն ավարտվում էր մի արդյունքով, որը շատ տարօրինակ տրամաբանության առկայությամբ միայն կարելի էր հաջողություն անվանել. գիտնականներն իրենց «արհեստական ճանապարհներով» «ստանում» էին ամեն ինչ, բայց ոչ մարդ...

Առհասարակ բավական բարդ խնդիր էր: Բանն այն է, որ բժշկության որոշ ճյուղերում իսկապես էլ «շոշափելի էին օգուտները»: Բայց, արդյո՞ք, լայն խավերի համար էին շոշափելի, թե՞... Մյուս կողմից էլ՝ այդպիսի գիտափորձերի բուն պատճառներն էին շատ աղոտ. կամ մարդիկ ճանձրացել էին բնական ճանապարհով «մարդ ստանալուց», կամ... ի՞նչ... ո՞րն էր, ի վերջո, նպատակը:

Իսկ Կրատը խոսում էր: Խոսում էր՝ հընթացս առույգանալով ու ոգեւորվելով, ձեռքերը չափավոր թափահարելով, հայացքով ընդգրկելով մոտիկն ու հեռուն, ասես դիմելիս լիներ ոչ թե ընդամենն ինը հոգու, այլ բազմահազարանոց մի լսարանի... Բազմաթիվ գիտական եզրեր էր գործածում, ինչ-որ կետեր էր առանձնացնում ու կարեւորում, հուզվում էր ու խաղաղվում. կարելի էր ստանալ այն տպավորությունը, թե նրա ճառի նպատակը հենց նույն այդ ճառն է, այլ ոչ՝ դրանում արծարծվող թեման...

Շարունակելի

Լուսանկարներ, որոնք փոխել են աշխարհը

Ծուղակ

Փողոցում մի նկարչատախտակ է տեղադրված, որի վրա աշխատում է նկարիչը: Բնորդուհին՝ նրա առջեւ նստած վերարկուով մի աղջիկ է: Սակայն նկարիչը նրան... մերկ է նկարում:

Սա լուսանկարչի կողմից հորինված սյուժե է, որի հիմնական նպատակն էր ստուգել պատահական անցորդների ուշադրությունն ու արձագանքը: Շնիկին զբոսանքի հանած այս հերաքրքրասեր պարոնը պարզապես հայտնվել է լուսանկարչի պատրաստած թակարդում:

Մի քանի խոսք միկրոալիքային վառարանի, հեռուստացույցի եւ համակարգչի մասին

Միկրոալիքային վառարան

Միկրոալիքային վառարանների վտանգավոր լինել-չլինելը վիճարկման թեմա է գիտնականների համար: Բժիշկները կարծում են, որ միկրոալիքների ազդեցությանը ենթարկված մոլեկուլներով սնունդը մարդու համար վտանգավոր է: Շվեյցարացի գիտնականների ուսումնասիրությունները ցուց են տվել, որ միկրոալիքային վառարաններում պատրաստած եւ տաքացրած սննդի օգտագործման հետեւանքով՝ մարդու արյան մեջ հեմոգլոբինը նվազում է, իսկ խոլեստերինը՝ ավելանում:



Կարծիք կա, որ մարդու վրա վատ ազդեցություն է ունենում նաեւ վառարանին շատ մոտ գտնվելը: Հայաստանի փրկարար ծառայության տեխնածին վթարների եւ հակաքիմիական, հակաճառագայթային բաժնի պետ Կարապետ Կարապետյանը մեր ներկայությամբ AD6 կոչվող ճառագայթային ախտոտվածության որոշիչ սարքով ստուգում է միկրոալիքային վառարանի ճառագայթման աստիճանը: Սարքը ոչինչ չի գրանցում:

- Ժամանակակից միկրոալիքային վառարաններն ունեն հատուկ պաշտպանիչ շերտ, եւ ճառագայթումը դրանցից դուրս չի գալիս, այսինքն՝ վառարանի անմիջական հարեւանությամբ գտնվողը չի կարող ճառագայթահարվել: Իսկ դռնակը բաց վիճակում սարքն ուղղակի չի միանում, - ասում է Կարապետ Կարապետյանը:

Ճառագայթահարվելուց խուսափելու համար ուղղակի խորհուրդ է տրվում միկրոալիքային վառարան գնելիս ուշադիր լինել եւ համոզվել, որ այն ունի անվտանգությունը երաշխավորող վկայականներ: Սակայն ոչ մի վկայական չի կարող ապահովագրել մոլեկուլային փոփոխության ենթարկված սննդից:

Հեռուստացույց

Բոլորի տան լավագույն բարեկամ հեռուստացույցի հետ բոլորս էլ ամեն օր շփվում ենք, այն էլ՝ ժամերով ու սերտորեն: Շփվում ենք ու ճառագայթահարվում: Դե, ուրեմն պետք է գոնե 2 մետր հեռավորության վրա նստենք, որ աչքերը խնայենք ու չճառագայթահարվենք: Շտապենք «սփոփել» նշելով, որ ներկայիս հեռուստացույցները այնքան էլ ուժեղ չեն ճառագայթում: Միջին չափսի, հարթ էկրանով հեռուստացույցի մոտ ճառագայթային ախտոտվածության որոշիչ շարքը գրանցում է վայրկյանում ընդամենը 22 իոնիզացնող ճառագայթի հոսք, այն դեպքում, երբ բնական ֆոնը մոտ 10 է: Սարքը էկրանից մի քիչ հեռացնելու դեպքում այն այլեւս ոչինչ չի գրանցում: Սակայն ՅՈՒՆԵՍԿՕ-ի (Միավորված ազգերի կրթական, գիտական եւ մշակութային կազմակերպություն) համոզմամբ առավել վտանգավոր է ոչ թե հեռուստացույցի ճառագայթումը, այլ՝ դրա հոգեբանական ազդեցությունը: Հեռուստացույցը խաթարում է ընտանեկան հարաբերությունները: Այն փոխարինում է ջերմ շփումներին, գիրք կարդալուն, մայրիկի օրորոցայիններին, տատիկի հեքիաթներին, հոր հետ զրույցներին: Փորձագետների համոզմամբ՝ հեռուստացույցի բացասական ազդեցությունն ավելի նկատելի է երեխաների մոտ: ՅՈՒՆԵՍԿՕ-ի տվյալներով 3-5 տարեկան երեխաների 93 տոկոսն օրական 4 ժամ հեռուստացույց է նայում: Եթե մեծահասկաները կարող են փոխել ալիքը, չհավանել ինչ-որ բան ու չնայել, անջատել հեռուստացույցը, ապա երեխաները նայում են ամեն ինչ, նայում են, սովորում եւ յուրացնում: Ստացվում է, որ երեխայի անհատականությունը ձեւավորվում է հեռուստատեսության միջոցով: Վերջերս նկատվում է նաեւ երեխաների խոսքի ուշ զարգացում, պրիմիտիվ բառապաշար, շատ փոքրիկների համար դժվար է դարձել ընկալել տեղեկատվությունը, նրանք երեւակայություն եւ ստեղծագործական ակտիվություն չունեն, փոխարենն ավելի ագրեսիվ են ու դաժան: Այս ամենը փորձագետները կապում են հեռուստացույցի հետ:

Համակարգիչ

Համակարգիչը նույնպես ներխուժել է մեր կյանք եւ գնալով ավելի ու ավելի շատ մարդկանց «սրտեր է գրավում»: Ամերիկացի գիտնականները կարծում են, որ համակարգիչն ազդում է երեխաների հասակի աճի վրա եւ խանգարում նրանց սովորել հաղորդակցվել մարդկանց հետ:

Ճառագայթման տեսանկյունից համակարգիչը նույնպես որոշակի վտանգ է ներկայացնում: Հայաստանի փրկարար ծառայության տեխնածին վթարների եւ հակաքիմիական, հակաճառագայթային բաժնի պետ Կարապետ Կարապետյանը AD6 ճառագայթային ախտոտվածության որոշիչ սարքով ստուգում է նաեւ համակարգչի էկրանից եկող ճառագայթումը: Այն գրեթե նույնն է, ինչ հեռուստացույցի դեպքում, իսկ այսպես կոչված հեղուկ-բյուրեղային էկրանի մոտ սարքը ճառագայթում բացարձակ ցույց չի տալիս:

Այսպիսով, համակարգչի բացասական ազդեցությունից խուսափելու համար պետք է երեխաներին թույլ չտալ շատ տարվել դրանով, էկրանը պիտի լինի 45 սանտիմետրից ոչ պակաս հեռավորության վրա: Խորհուրդ չի տրվում համակարգչի առջեւ նստել օրական 4 ժամից ավելի, եւ պետք է ամեն 40 րոպեն մեկ՝ 20 րոպեանոց ընդմիջում անել:

Անի Ստեփանյան

արտակարգ ժամանց

Բուրավետ թեմա

Կրթությա՞ն, թե՞ շնչելու իրավունք

1999 թ. Նիդեռլանդների Ռոտերդամ քաղաքում գտնվող «Էրազմ» համալսարանից հեռացնում են ուսանող Թեունիս Թենբրուքին: Պատճառը... նրա ոտքերից տարածվող չափազանց ուժեղ ու տհաճ հոտն էր: Համակուրսեցիներն ու դասախոսներն անընդհատ բողոքում էին եւ ասում, որ նրա հետ հնարավոր չէ գտնվել միեւնույն լսարանում: Սկզբում Թենբրուքին արգելում են ներկա լինել դասախոսություններին: Վերջինս փորձում է զբաղվել ինքնակրթությամբ՝ օգտվելով համալսարանի գրադարանից: Սակայն շուտով նրան զրկում են նաեւ գրադարանի տոմսից եւ արգելում ընթերցասրահ մտնել:

Այդ ժամանակ ուսման ծարավ ուսանողը որոշում է կրթության իր իրավունքը վերականգնել դատարանի միջոցով: Դատական քաշքշուկը տեւում է շուրջ տասը տարի: Վերջապես դատավորը գալիս է այն եզրակացության, որ համալսարանի ղեկավարությունն իրավունք չուներ Թենբրուքին զրկել սովորելու հնարավորությունից: Բոլոր նրանց, ովքեր տհաճ հոտեր չեն սիրում, դատավորը խորհուրդ է տալիս «փակել իրենց քթերը»:

Դատարանի կայացրած վճիռը լսելուց հետո համալսարանի ներկայացուցիչները հայտարարում են, որ այլեւս չեն խոչընդոտի բուրավետ ուսանողների կրթությանը, սակայն անձնական հիգիենայի կանոնները չպահպանելու համար խոշոր տուգանքներ են սահմանելու:

Մրցանակ՝ հոտի համար

Վերջերս ԱՄՆ-ի Վերմոնտ նահանգում անցկացվում էր ամենավատ հոտ ունեցող մարզակոշիկների ամենամյա մրցույթը: Այս յուրօրինակ ստուգատեսն ավանդաբար կազմակերպում է կոշիկների համար հոտազերծիչ նյութեր արտադրող մի ընկերություն: Եզրափակիչ փուլում մրցում էին 7-15 տարեկան ութ երեխա: Հանձնաժողովի կազմում էին պրոֆեսոր Բրաուն Ռեյչել Հերսքը եւ ԱՄՆ-ի ազգային տիեզերական գործակալության փորձագետ, քիմիկոս Ջորջ Օլդրիխը:

Մրցույթի հաղթող է ճանաչվում Ալյասկայից 15-ամյա Բեն Ռասելը: Իր հաղթանակի գաղտնիքը բացահայտելիս նա պատմում է, որ մոտ երկու տարի այդ մարզակոշիկներով աշխույժ խաղեր է խաղացել, գնացել որսի եւ ձկնորսության: Հանձնաժողովի անդամները Բենին հանձնում են «Ոսկե մարզակոշիկի» գավաթը, 2500 դոլար գումար կազմող մրցանակը, հոտազերծիչ նյութերի հավաքածու, ինչպես նաեւ Նյու Յորքի ուղեւորության տոմս:

Դուրս ինքնաթիռից

2006 թ. ամռանը Գերմանիայի քաղաքացի Վեռներ Բրիչֆիլդին իջեցնում են Հոնոլուլուից Լոս Անջելես թռչող ինքնաթիռից: Պատճառը՝ նրա վրայից եկող քրտինքի տհաճ հոտն էր: Պարզապես օդանավ բարձրանալուց առաջ 46-ամյա գերմանացին ամբողջ օրն անցակցրել էր Հավայան կղզիների թեժ արեւի տակ՝ ուսումնասիրելով տեղի տեսարժան վայրերը: Բնական է, որ դրանից հետո նրա վրայից մանուշակի հոտ չէր գալու: Ամենից շատ տուժում է օդանավի սրահում նրա կողքին հայտնված ուղեւորը: Վերջինս կանչում է ինքնաթիռի ուղեկցորդուհուն եւ խնդրում կարգի հրավիրել իր «անուշաբույր» հարեւանին: Ուղեկցորդուհու բոլոր ջանքերն անօգուտ են անցնում, եւ ինքնաթիռի անձնակազմը որոշում է դուրս անել Վեռներին: Արդյունքում՝ նա ստիպված է լինում 4 ժամ անցկացնել օդանավակայանում՝ սպասելով հաջորդ օդանավին:

Հասնելով հայրենի Դյուսելդորֆ՝ նա միանգամից ուղեւորվում է դատարան եւ գործ հարուցում ավիաընկերության դեմ: Որպես բարոյական վնասի փոխհատուցում՝ գերմանացին 2500 դոլար է պահանջում:

Արգելվում է օրենքով

Մի քանի տարի առաջ Մեծ Բրիտանիայի Նորվիչ քաղաքը սպասարկող ավտոբուսների վարորդներին նոր համազգեստի հետ նաեւ մի թերթիկ են տալիս, որտեղ նշված էին նրանց աշխատանքի կանոնները:

Այդ ժամանակից ի վեր անգլիացի վարորդների «սուրբ» պարտականություններից են՝ պարբերաբար լողանալը, օծանելիք օգտագործելն ու ամեն օր նոր ու մաքուր վերնաշապիկ հագնելը: Նրանք նաեւ պետք է խնամված ձեռքեր ու եղունգներ ունենան եւ կարող են կապել միայն դասական ոճի փոքրիկ ժամացույց: Գուլպաները պետք է միայն սեւ կամ երկնագույն լինեն, կոշիկները՝ փայլեցված: Ի դեպ, երթուղի դուրս գալիս կտրականապես արգելվում է սպորտային տաբատ հագնելը:

Անտիկ հույն գիտնական / Թաղամաս Երեւանում	⇨	Բեկար, դիեզ / Թղթախաղում արքայազն	⇨	Մորդովայի մայրաքաղաքը	⇨	⇩		⇩		⇩	
⇨		⇩			Նախկինում, հնում		Սպիտակած մազերով / Սիզամարգ		«Բիթլզ» խմբից՝ Ջոն ...		Իոսիֆ Վիսարիոնովիչ Ջուդաշվիլի
Նոյի կրտսեր որդին / Պահածոյացված անասնակեր	⇨			Պորտուգալցի ծովագնաց / Չկան տեսակ	⇨		⇩		⇩		
⇨				⇩	Երիտասարդ / Գավառ Սյունիքում	⇨					Եկեղեցական տարածքային վարչական միավոր
Տիրակալ՝ միջին դարերում / Ծովային կենդանի	⇨				⇩	Սանկտ Պետերբուրգի ֆուտբոլի թիմը	⇨				⇩
⇨			Բոտսվանայի մայրաքաղաքը / Ե՛վ յոդ, եւ բրոմ	⇨		⇩					
Բոցկլտալ, բոցավառվել		Հնարովի պատճառ, առիթ	⇩	Հարուստ, բարեկարգ	⇨			Հողի օրգանական մուգ գունավորված մասը		Ամերիկյան ֆոտոֆիրմա	
⇩	Խիստ ծարավ / Տարածք Ռուսաստանում	⇨ ⇩					Մաս, մնացորդ, կտոր	⇩	Հայախոս գնչու	⇩	Միտինգ
⇨				Ժխոր, իրարանցում	⇨				⇩		⇩
	Օրացույց, տարեցույց / Ոսկու մաքրության աստիճանը	⇨					Նորաձեւություն	⇨			
⇨				Ելենա Բոների ամուսինը		Ծաղիկ / ...Գանձակեցի	⇨				
	Վեհ, բարձր / Ռուս ճանապարհորդ՝ ... Նիկիտին	⇨		⇩	Պատան	⇩	Հնագույն զենք, կացնի տարատեսակ	⇨			
⇨					⇩						
	Կինոնկարի մի հատված		Անասնակեր / Ռուսաստանի խորհրդարանը	⇨							
Ամրացման դետալ	⇩	Ուղտ՝ բարբառային	⇩ ⇨								
⇨											
Տուրիստական միջոցառում		Ստերեո	⇨								
⇨					Հայաստանից դուրս ապրող հայությունը	⇨					

§²ñï³Ï³ñ·Ã»ñÃ¦
ß³µ³Ã³Ã»ñÃÇ
ÑÇÙÝ³¹Çñ »ñÑñ³ï³ñ³ÏÇã
§²ñï³Ï³ñ·³ÉÇù¦
Éñ³ïí³Ï³Ý Ï»ÝïñáÝ êäÀ

îÝûñ»Ý-ËÙµ³·Çñ
ÜÇÏáÉ³Ù ¶ñÇ·áñÙ³Ý
öáËïÝûñ»Ý-ËÙµ³·Çñ
²ñ³ØáíëÇëÙ³Ý
Ò»ñ³íáñáÕª
Ì³ñ¹³Ý ¶³ëå³ñÙ³Ý

Â»ñÃÁ ïå³·ñíáõÙ »ñï³ñ³ÍíáõÙ ¿ º²ÐÎ³ç³ÏóáõÃÙ³Ùµ

OSCE

ºíñáå³ÙáõÙ³Ýíï³Ý·áõÃÙ³Ý
»ñÑ³Ù³·áñÍ³ÏóáõÃÙ³Ý
Ï³½Ù³Ï»ñåáõÃÙáõÝ »ñ»ñ³ÝÙ³Ý·ñ³ë»ÝÙ³Ï

º»ñ»ñ³Ý, äáõßÏÇÝÇ 25
Ð»é. 56 76 56, 24 24 22
E - mail: tert@emergency.am

îå³·ñí³Í ¿ §îÇ·ñ³Ý Ø»Í¦ Ññ³ï³ñ³ÏïáõÃÙ³Ý
ïå³ñ³ÝáõÙ` ²ñß³ÏáõÝÙ³ó 2
Ì³í³ÉÁ` 2 ïå³·ñ³Ï³Ý Ù³ÙáõÉ
ä³ïí»ñ`435, ·ñ³ÝóÙ³Ý íï³ù³Ï³Ý`1074,
ïå³ù³Ý³ÍÁ` 5000 ûñÇÝ³Ï:
Ստորագրված է տպագրության
11.2.2009 թ.